



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 19 ՍԵՄՏԵՄԲԵՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԲԱՆ ԽԱ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Կենդանի Աստուծոյ ամենօրհնեալ Որդի,
ահաւոր Հօրդ անբնիկ ծնունդն ես Դուն,
Քեզի համար չկայ բնաւ անկարելի բան.
Քու ողորմութեանդ փառքին անստուեր նշոյլները երբ կը ծագին,
մեղքերը կը հալին, դեւերը կը հալածուին,
յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին,
շղթաները կը խորտակուին, մահացածները կը կենդանաձնին,
հարուածները կը բժշկուին, վերքերը կ'առողջանան,
ապականութիւնները կը վերցուին, տխրութիւնները տեղի կու տան,
հեծութիւնները կը նահանջեն, խաւարը կը փախչի,
մէգը կը մեկնի, մառախուղը կը հեռանայ,
մոայլը կը փարատի, աղջամուղջը կը սպառի,
մութը կը վերնայ, գիշերը կ'անցնի,
տագնապը կը տարագրուի, չարիքները կը չփանան,
յուսահատութիւնները կը հալածուին,
ու Քու ամենակարող ձեռքդ կը թագաւորէ, ո՛վ փաւիչդ ամենայնի: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, Կի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 1:1-15



ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Երգ երգոց կը նշանակէ օրհնութիւններու օրհնութիւնը: Հին Կրակարանին մէջ շատ մը երգեր կան, որոնք երգեցին Տիրոջ օրհնութիւնը, Տիրոջ պապրասպելիք փրկութիւնը, իսկ այս անգամ այս Երգը այդ երգերուն երգն է, որ նոյն ինքն Փեսան՝ Քրիստոսն է որ պիտի երգէ իր Սէրը հանդէպ հարսին՝ Եկեղեցիին, մեղաւոր մարդուն, որ իր իսկ մեծ ողորմութեամբը՝ մարդը վերադարձաւ առ Աստուած:

Հետաքրքրականօրէն կարելի է հարցնել, ինչո՞ւ խորհրդաւոր կամ պատկերաւոր ձեւով կը ներկայացուի այս երգը, թող որ բնական ու պարզ բառերով պարզապէս ըսուի Աստուած կը սիրէ մարդս: Նարեկացին կը բացատրէ. «Ինչպէս որ արժէքաւոր բաները գեղեցիկ փեսք ունեցող ամաններու մէջ կը պահեն, անով զգուշութեամբ պահելու մէջի եղած, նոյնպէս ալ Աստուծոյ Խօսքը, իբրեւ հանք, այդպէս պարզ ձեւով կարելի չէ ներկայացնել: Միւս կողմէ, պէտք է զգուշ ըլլալ, որ բոլորովին ալ չթաքցնել, այլ՝ նաեւ բացատրութեամբ փոխանցել հաւատարացեալներուն, մանաւանդ անոնց, որոնք Աստուծոյ Սուրբ Հոգիով լեցուած պապրասպ են լսելու եւ սորվելու»:

Հետաքրքրականօրէն նաեւ, ինչո՞ւ հարսի եւ փեսայի պատկերով կը ներկայացուի այս երգը: Ու մանաւանդ ինչպէ՞ս կարելի է աստուածային խորհուրդները եւ Աստուծոյ անչափելի սէրը ներկայացնել մարմնական ցանկութեամբ եւ ախարաւոր սիրոյ օրինակով:

Նախ, որովհետեւ մարդը այնքան հեռացաւ Աստուծմէ ու աստուածային խորհուրդներէն, որ Սուրբ Հոգին Սողոմոնի միջոցաւ անասնական ցանկութեամբ յայտնեց այդ խորհուրդները: Յովհան Ռսկեբերան հայրապետը պիտի ըսէ. «Այնպիսի սրբակենցաղ վարք պէտք է ունենայինք, որ նոյնիսկ գրելու կարիքը չըլլար, այլ ինչպէս որ էր պարագան Նոյին եւ Աբրահամին, ուր Աստուծոյ խօսքը իրենց սրտերուն մէջ արձանագրուած էր եւ ոչ թէ գիրքերուն մէջ: Նոյնպէս ալ մենք հրեշտակային եւ լուսաւոր միտք ու սիրտ պէտք է ունենայինք, որպէսզի կարիքը չզգացուէր հարսի ու փեսայի պատկերով ներկայացնելու Քրիստոսի եւ Եկեղեցւոյ խորհուրդը, ինչպէս նաեւ երկնային խորհուրդները»: Այս բոլորը, որովհետեւ կորսնցուցինք մեզի փրուած աստուածային շնորհքը եւ մեր աչքերը կուրացան փեսնելու եւ հասկնալու աստուածային խորհուրդները, անոր համար ալ մարմնաւոր կերպով փեսնելու եւ հասկնալու հոգեւորը: Տակաւին, սուրբ ամուսնութեան խորհուրդը, չպղծելու, եւ հարսի ու փեսայի իրարու նկարմամբ սէրը անարար պահելու, ինչ որ Քրիստոսի եւ Եկեղեցւոյ իրարու նկարմամբ սէրն է: Ահա այս բոլորը կու գան ցոյց տալու Աստուծոյ անսահման ու անչափելի սէրը հանդէպ մարդ արարածին:

Ի վերջոյ, այս գիրքը կարդալու եւ հասկնալու համար Նարեկացին կը թելադրէ եւ կը զգուշացնէ, որ պէտք է մեր միտքն ու խորհուրդները մաքրուին մարմնաւոր ամէն փեսակի մտածումներէն: Գոցելու մեր մարմնաւոր աչքերը եւ բանալու հոգիի աչքերը, որպէսզի կարենանք փեսնել ու հասկնալ աստուածային խորհուրդները: Ուրեմն, պէտք է խնդրել Սուրբ Հոգիէն որպէսզի մեզի փայ շնորհքը լսելու եւ հասկնալու:

Սողոմոն կը նշանակէ խաղաղութիւն, եւ այս պարագային կ'անկնարկէ Քրիստոսի, ուրեմն խորքին մէջ Քրիստոսի երգն է, որովհետեւ ինքն է մեր ճշմարիտ խաղաղութիւնը:

Համբուրէ, այնպէս ինչպէս անառակ որդիին հայրը համբուրեց զինք, նոյնպէս ալ մեզ համբուրէ:

Ստիկնքները եւ անկէ բխած կաթը, կը խորհրդանշեն աստուածային պապուիրանները, որոնք կեանք կու տան մարդուն, ինչպէս որ կաթը կենդանութիւն է մանուկին: Թափուած իւղի պէս, կը նշանակէ անհիմնալի, ինչպէս որ թափուած իւղը չենք կրնար չափել, նոյնպէս ալ Քրիստոսի ինքնութիւնը կարելի չէ իմանալ:

Օրիորդները արդարներն են ինչպէս նաեւ հրեշտակները: Անգամ մը որ ճաշակենք Տիրոջ քաղցրութիւնը պիտի ուզենք ատելին ունենալ: Փեսան զիս փարաւ իր սենեակը: Մեր մեղքին պարճառով դուրս դրուած էինք դրախտի վայելքէն, այս անգամ սակայն, Փեսան կու գայ մեզ փանելու ոչ թէ Դրախտ, այլ իր իսկ սենեակը, որ Իր արքայութիւնն է: Այս բոլորով հանդերձ կը պահանջուի հարսէն ըլլալու ուղիղ, որովհետեւ զինք սիրողը ինք ուղիղ է: